ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-85-Ո-248
2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՔՐԵԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ (ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ) ՄՇԱԿՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2021 թվականի հոկտեմբերի 18-ին, դռնփակ նիստում, քննարկելով դատավորների թեկնածուների ցուցակի քրեական և քաղաքացիական մասնագիտացման բաժինների համալրման նպատակով 2021 թվականի հերթական որակավորման գրավոր քննության հարցեր (թեստային առաջադրանքներ) մշակելու համար մասնագետներ ընտրելու վերաբերյալ հարցը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, 100-րդ հոդվածի 2-րդ մասով և Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԲԴԽ-73-Ո-175 որոշման 2-րդ հավելվածով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Դատավորների թեկնածուների ցուցակի քրեական և քաղաքացիական մասնագիտացման բաժինների համալրման նպատակով 2021 թվականի հերթական որակավորման գրավոր քննության հարցեր (թեստային առաջադրանքներ) մշակող մասնագետներ ընտրել՝

1) Քրեական իրավունքի բնագավառում գրավոր քննության հարցերի (թեստային առաջադրանքների) մշակման նպատակով՝ **Համլետ Ասատրյանին** (Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ),

2) Քրեական դատավարության իրավունքի բնագավառում գրավոր քննության հարցերի (թեստային առաջադրանքների) մշակման նպատակով՝ **Սերգեյ Մարաբյանին** (Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր),

3) Քաղաքացիական իրավունքի բնագավառում գրավոր քննության հարցերի (թեստային առաջադրանքների) մշակման նպատակով՝ **Անի Մութաֆյանին** (Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու),

4) Քաղաքացիական դատավարության իրավունքի բնագավառում գրավոր քննության հարցերի (թեստային առաջադրանքների) մշակման նպատակով՝ **Նորա Կարապետյանին** (Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն սույն որոշման 1-ին կետի 1-4-րդ ենթակետերով սահմանված համապատասխան մասնագետների կողմից ստանալուն հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ. ՋՀԱՆԳԻՐՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 18
ք. Երևան